

**ՀՀ ֆինանսների նախարարություն**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 30/2**

**25 նոյեմբերի 2014 թ.**

Քննարկվեց «Գազտեխշին» ՍՊԸ գանգատը ՀՀ ՖՆ ՕԿՎ 28.10.2014 թ-ի թիվ 1003855/2 ակտի դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 26.09.2014 թ-ի թիվ 1003855/2 հանձնարարգրի համաձայն «Գազտեխշին» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության վերստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ ՕԿՎ 28.10.2014 թ-ի թիվ 1003855/2 ակտը:

Նշվեց նաև, որ «Էլֆարմ» ՍՊԸ կողմից հարկման հիմք հանդիսացող փաստաթղթերում ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով հարկեր վճարելուց չարամտորեն խուսափելու դեպքի կապակցությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով ՀՀ գլխավոր դատախազության կողմից 23.01.2014 թ-ին հարուցվել է թիվ 61200414 քրեական գործը: Նշված քրեական գործն անմիջականորեն առնչվում է նաև «Գազտեխշին» ՍՊԸ-ի կողմից իրականացված տնտեսական գործունեությանը՝ «Էլֆարմ» ՍՊԸ-ի հետ իրականացված գործարքներին:

Ներկայումս քրեական գործի նախաքննությունը իրականացվում է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննչական գլխավոր վարչության կողմից:

Հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Քննարկվող դեպքում հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել և քննվում է թիվ 61200414 քրեական գործը, անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, մինչև քրեական դատավարության կարգով որոշում կայացնելը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Գազտեխշին» ՍՊԸ գանգատի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարությունում հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

«Գազտեխշին» ՍՊԸ գանգատի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարությունում հարուցված վարչական վարույթը կասեցնել:

**Հանձնաժողովի նախագահ՝**

